ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար դատավորների պատմուճանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«21» մայիսի 2025թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1.Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/08» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (19.05.2025թ.)՝ ժամը 10:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 20.05.2025թ.՝ ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ նաև Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝

հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և գնման հայտով սահմանված են ապրանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գները.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Արտադրական հատուկ հագուստ (դատավորի պատմուճան)	14372820
2	Արտադրական հատուկ հագուստ (դատավորի պատմուճան)	7186410
3	Արտադրական հատուկ հագուստ (դատավորի պատմուճան)	7186410

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ	ք. Երևան, Արամի փ., շ. 74, բն. 60
ԱՁ Արաքսիյա Կակոյան	ՀՀ Շիրակի մարզ գ.Փանիկ 9/17
ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ	ք. Վանաձոր Վարդանանց 122
ԳԴԱԿ ՍՊԸ	ք. Երևան, Բաբայան 36,72/1
ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ	ԿԻԵՎՅԱՆ Փ. / Շ / 8 / 62 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0028

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/08» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	
1	«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ	16000000	0%	16000000	10000000	0%	10000000.00	
1	ԱՁ Արաքսիյա Կակոյան	11977350	20%	14372820	11000000	20%	13200000.00	
1	ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ	11977070	20%	14372484	11977070	20%	14372484.00	
1	ԳԴԱԿ ՍՊԸ	14500000	20%	17400000	14500000	20%	17400000.00	Մերժված
1	ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ	550000000	20%	660000000	550000000	20%	660000000.00	Մերժված
2	«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ	8000000	0%	8000000	5000000	0%	5000000.00	

2	ԱՁ Արաքսիյա Կակոյան	5988675	20%	7186410	5389000	20%	6466800.00	
2	ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ	5988670	20%	7186404	5988670	20%	7186404.00	
2	ԳԴԱԿ ՍՊԸ	7250000	20%	8700000	7250000	20%	8700000.00	Մերժված
2	ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ	550000000	20%	660000000	550000000	20%	660000000.00	Մերժված
3	«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ	8000000	0%	8000000	5000000	0%	5000000.00	
3	ԱՁ Արաքսիյա Կակոյան	5988675	20%	7186410	5389000	20%	6466800.00	
3	ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ	5988670	20%	7186404	5988670	20%	7186404.00	
3	ԳԴԱԿ ՍՊԸ	7250000	20%	8700000	7250000	20%	8700000.00	Մերժված
3	ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ	550000000	20%	660000000	550000000	20%	660000000.00	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 20.05.2025թ.՝ ժամը 10:30-ին և 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) հաստատված է լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրով «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի տնօրենը լիազորել է հիշյալ անձին «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի անունից մասնակցել պետական և այլ իրավասու կազմակերպությունների կողմից հայտարարված գնման գործընթացներին, այն դեպքում, երբ հայտը ներկայացվել է Դատական դեպարտամենտի կողմից հայտարարված գնման ընթացակարգին,
- 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Միաժամանակ ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), որպես ավելորդ տեղեկատվություն, գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2025թ. մայիսի 23-ին՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/08» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի** հայտում արձանագրված անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **մայիսի 22-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան